

ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

Գոչունեան Մանուկ Յ, ծնած է Կիւրին 1851ին: Զաւկին (Մկրտիչի) հետ առևտրական գործով երկար ատեն պարապել է եւք՝ 1910-11ին կը հիմնէ սողարան մը Մեծ Նոր Թան (Պոլիս) լոյս ընծայելով Աստղ Բերլինեւմի կրօնարարական պարբերութիւնը՝ (1911-12, 9 թիւ միայն)՝ իր խմբադրութեամբ: (Թէոքիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 132):

ԳՕԶՈՒՆԵԱՆ Մարտիրոս, խմբադիր, ծնած է Պոլիս 1900ին: Նախնական կրթութիւնը Գումգարուի Իրսի Պօզոս - Վառվառեան Ազգ. վարժարանին մէջ ստանալէ յետոյ յաճախած է Նոր Դպրոց եւ ապա իր երկրորդական ուսումը ստացած է Բուդէրթ Գոյէճի մէջ: Կանուխէն ընդգրկւած է խմբադրական ասպարէզը: Երկար տարիներ իբր մնայուն խմբադիր աշխատած է Ժամանակի եւ այլ թերթերու մէջ: 1934ին հիմնած է Թուրքիա քաղաքական մեծ օրաթերթը, որ ատեն մըն ալ Ժամանակի հետ միասնաբար հրատարակուելէ յետոյ դադրած է: Իր խմբադրած թերթերուն մէջ ստորագրած է քաղաքական եւ ազգային նիւթերու շուրջ այժմէական յօդուածներ կուռ եւ ուժեղ ոճով մը: Ազգային կեանքի վերարերեալ իր տեսութիւնները մասնաորաբար քննադատական բնոյթ կրած են: Մ. Գոչունեան 1936էն ի վեր որպէս մնայուն խմբադիր մաս կը կազմէ Սօճ փոքրախ խմբադրական մարմինն:

ԳՕԶՈՒՆԵԱՆ Մելիք, արտօնատէր - խմբադիր Ժամանակ օրաթերթի: Ծնած է Պոլիս 1908ին: Երջանաւարտ Պէդագոգեան լիսէն: Իր գործունէութիւնը սկսած է եւ կը շարունակուի խմբադրական ասպարէզին մէջ: Աւթը էջ հրատարակուող միակ օրաթերթն է Ժամանակ, որուն վարչական եւ խմբադրական պատասխանատուութիւնը ստանձնած է Մ. Գոչունեան, պահելով անոր ժողովրդական չէզոք ուղղութիւնը: մա-

ԳՕԶՈՒՆԵԱՆ Միսաք, վիպագիր հրատարակագիր: Ծնած 16 Սեպտ. 1863, Հալէպ: Նախնական կրթութիւնը ստացած է Կիւրինի Ազգ. յետոյ Այնթապի Կիլիկեան գիշերօթիկ դպրոցները: Վերջինէն շրջանաւարտ 1877ին: Մանկութենէն օժտուած գործնական միտքով մը, կանուխէն նետուած է առևտրական ասպարէզ, Կեսարիա, ուրկէ Պոլիս (1881), ապա Եոզղատ. կըրկին Հալէպ, Քիլիս եւ Այնթապ, իսկ 1886 Հոկտ. 16ին վերջնականականապէս հաստատուած Պոլիս: Պահ մը Գումգարու վարժարան բացած է Հերուսալեմ անուն, որ երկու տարուան կեանք ունեցած է, յետոյ պաշտօնաւարած Թուրքիական վաճառատունը: Իր առաջին գրուածքը՝ Կեսարիայէն Մելիքեանի Հայրենիքին դրկուած թղթակցութիւն մըն է (Սիոակ Գոչունեան), իսկ անկէ առաջ Սնանկիլ թատերախաղն անտիպ: Այնթապ ուսանող եղած ատեն՝ դասընկերներուն հետ Բիւրակն անուն դպրոցական թերթ մը հրատարակած է ձեռագիր, 1 տարի: Քէյֆուղեան Մկրտիչ կաթողիկոսի հիմնած Կիլիկեան վարժարանի մէջ սիրելի աշակերտն էր Նշան Թէրզեան անուն Սերաստացի հայրէնի ուսուցչին, որ առաջին Հայն էր երկրագործութիւնը սորվելու համար դաւառնէն Եւրոպա անցնող, մինչ անոր բուն նպատակն էր յեղափոխութիւնը հասունցունելու՝ Լօզանի մէջ: 1891ին երբ Մանգուսէի արտօնատէր Կ. Փանոսեան կաթուած ունեցաւ, մասնախումբ մը թերթին խմբադրական եւնամէն հոգ յանձնեց Բասիմի, որ 500 մը հաղիւ ծախուած այդ լրտղրին սպա-

ուսմը բարձրացուց 3500ի, նոյն տարեկան թրքարարքառ հայաթերթի մը համար մեծ բան էր: Բայց ախուր մասնութամբ մը Մանգաւէ գոյուեցաւ եւ ինք խիստ հարցաքննութիւններէ դժուարաւ պրծելով՝ անցաւ Էրէյլի, Ունճեանի հիմնած հանքածուխի ընկերութեան վարիչ հաշուակալի պաշտօնով, զոր տարի մը շարունակելէ հաջ դարձաւ Պոլիս 1894ին, մտնելով Սապախի խմբապատուն՝ իրր վարիչ պաշտօնեայ:

1887ին սկսած է կոնստանտնուպոլիսի թղթակցիլ Նոր Դարի՝ Անուշուան ծածկանունով: Նոյն տարեկանն էր որ Արեւելի մէջ գրած է Անկլիգան Էկեղեցին եւ Մկրտիչ Եպս. յօդուածը շահեկան, յուզելով նոյն եկեղեցիին՝ Կիրիլիա հիմնուելուն պարագաները: Յետոյ ծայր տուած է թէ ինչո՞ւններու շարքի մը, առաջինը՝ թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար, ուր ընկերային եւ ընտանեկան շատ մը հարցեր իրենց լուծումը կը գտնէին բարացուցական գուարթախոս սոսով մը, որ դայն ստորագրողին նկարագիրը կը յատկանշէ արդէն. (եթէ երբեք սակայն ստորագրութիւն կրէին անոնք, զի շատ մը յօդուածներ անստորագիր պահելու մենամուտութիւն ունի ցարդ): Այդ յօդուածները Նշան Պէրպէրեան խմբագրած էր իր Տարեցոյցներուն մէջ: Օր մը Մ. Մամուրեանի ուղղեալ անհաստական նամակ մը խմբագրելու, անկէ ստացած գրուատալից պատասխանէն քաջալերուած՝ Քասիմ սկսած է թղթակցիլ Ա. Մամուրի, (իր գրած ծածկանունին կնքահայր ունենալով մեծանուն Իղժիրցին), պատկերելով Պոլսահայ ազգ. կեանքը, որուն իր լրացուցիչ՝ Շահնուր իրր խայթհամեղ թղթակցութիւնները կ'երեւցնէր յաճախ: Աւելցնենք թէ ատոնց քննադատական ուղղութեան մօտեցող՝ Վաղինակ մը յաջորդեց, նոյն պարբերականին վերջին տարիներուն:

Քասիմ 1887ին գրած է Մէգարտա պիւ խոտիվան թրքերէն թատերախաղ մը, Գալաֆեանէ վճարուած իր առաջին երկը, զոր շարած է՝ հիմա ծանօթ գոհարալաճառ Սիւսակ Աշճեան (այն ատեն գրաշար՝ Գաֆալեանի քով): Քասիմ 1896ին կարգուած է ոսկերիչ Կարապետ Քիւրքճեանի աղջկան՝ Օր. Արտեմի հետ եւ կնքած երջանիկ ամուսնութիւն մը զար ցարդ կ'երգէ՝ ի դէպս պարագայի՝ իր խմբագրականներուն մէջ: Չարդի տարին, ինչպէս շատ մը Հայեր՝ ինք եւս մասնուեցաւ նիւթական ձախողանքի: Այդ թուականին է, որ պիմած է Թիֆլիսի Հրատարակչականին, Կեանքի տեսարաններ խորագրով նոր ձեռագիրներ յղելով, եւ պրակ դուրս 3 ոսկի ստանալով: Մանգաւէ երբ վերջնականապէս անցաւ Յովհ. Գայեթեանի, թերթին խմբագրութիւնը յանձնուեցաւ Քասիմի, որ նոր ուժեր իր շուրջը խմբած՝ տարուէ տարի աննախընթաց կերպով ժողովրդական դարձուց դայն, թէեւ թերթը քանիցս դադրեցուեցաւ գրաքննութենէն, եւ արտօնատէր ու խմբագրապետ բանտուեցան ստոր գրպարտութեանց հետեւանօք, ընթացիկ նորոյթն էին Հին Ռէփորմին: Այդ ժողովրդականութեան նպաստեցին իր թերթօնները՝ Նարեկի թարգմանութիւնը, Ե. Տէր Անդրէասեանի, Ժ. Երակացիի, Յակոբ Տէր Յակոբեանի եւ այլոց մշտատեւ աշխատակցութիւնը, մանաւանդ այն սղին, որ օրուան զանազան հարցալուրջ քողարկեալ քննադատութեանց մէջ կը մտնէր միշտ:

Իր խմբագրապետութեան շրջանը տեւած է մինչև Սահմանադրութեան հռչակում, որմէ յետոյ 15 Հոկտ. 1908ին, հիմնեց իր առաւօտեան թերթը Փամանակ զոր ցարդ կր շարունակուի: Իր երկիրը՝ 1. Կեանքի տեսարաններ (տպ. Թիֆլիս 1897), 2. Խորհրդաւոր Աղջիկը, 3. Տումէն Գերս, 4. Կարապետ (վրէժինդերը), 5. Ժողովուրդին դիրքը, 6. Աշխարհաբար Նարեկ, նաեւ Բիւզանդիոնի, Մանգաւէի, ու Փամանակի մէջ թերթօնուած ընդհ. եւ ազգ. այլ

վէպեր՝ Բախտախնդիրը, Ժառանգորդը, Կննուտ հանգոյց մը, Ոսկինբրու
նամբում վրայ, Կրակիմ մէջէն եւայլն: (Թէոգիկ՝ «Ամ. Տարեցոյց»ը 1912 էջ
380):

ԳՕԶՈՒՆԵԱՆ Մկրտիչ, Կիւրինցի, իր Մանուկ հօրը հետ Պոլիս գալով
ատեն մը առեւտրական գործով կը զբաղի. կ'անցնի Լիրանան ուր 1924-ին
Պէյրուսի մէջ կը հրատարակէ իր արտօնատէրութեամբ եւ պատասխանատու-
ութեամբ Նոր Փիւնիկ «աղաջային, քաղաքական» կիսապաշտօնաթերթը:

ԳՕԶՈՒՆԵԱՆ Սարգիս, ծնած է Հալաէս 1887 Փետրուարին եւ Քիլիսի
աղաջային վարժարանը ստացած է իր նախնական կրթութիւնը: Եզրօր Մխա-
քի հետ 1886ին Պոլիս գալով իր գլխաւոր դրադուսն ըրած Պոլսոյ բոլոր
թերթերուն ծանուցմանց բաժինը՝ 1895էն սկսեալ: Եւրոպական մեծ տունե-
րու ամէն լեզուէ սղոյթեր Պոլսական լրագրաց մէջ առաջին անգամ ընդհանրա-
ցընողի փառքն իրեն կը վիճակուի: Սարգիս Քասիմի հիմնած ժամանակ օրա-
թերթին վարչական գործերը վարած է եւ անոր մահէն ետք արտօնատէր ե-
ղած: Սարգիս պատասխանատու տնօրէն եղած է 1912-13 Պոլսոյ մէջ Ժամա-
նակ օրաթերթի փոխարէն լոյս տեսած (74 թիւ միայն) օրաթերթին: (Թէո-
գիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 126):

Սարգիս Գօշուհեան վարած է նաեւ աղաջային պաշտօններ, ատենապե-
տած է Աղչ. պատրիարքարանի Ելեւմոսից Հոգարարձութեան եւ մեռած 1926-
ին Պոլսոյ մէջ:

«Հայ Հանրագիտակ»

Մ. ՎՐԴ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՎԵՐ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԽԱՆԴԱՄՈՒՐ

Վեր. Հայկազուն Խանդամուր ծնած է 1874ին Մերաստիոյ նահանգի
Կիւրին քաղաքը: Որդին է Տօքթ. Սեդրակ Խանդամուրեանի: Իր նախնական
կրթութիւնը կը ստանայ Կիւրինի բողոքականներու դպրոցը: Իր ուսումը
շարունակելու համար կը մեկնի Սփազ 1888ին, հետեւելու համար Մերաստիոյ
Ամերիկեան բարձրագոյն վարժարանի դասընթացներուն, որուն շրջանը
կ'աւարտէ 1892ին: Յետոյ կը մեկնի իր ծննդավայրը Կիւրին, ստանձնելու
համար ուսուցչի պաշտօնը Կիւրինի բողոքական վարժարանին մէջ 1892-1893
դպրոցական տարեշրջանին: Ուսման փափաքը զինք կը մղէ երթալ Այնթապ,
րոյց դժբախտաբար ճամբան իրր յեղափոխական կը ձերբակալուի եւ կը բան-
տարկուի Մարաշի եւ Հալէսի մէջ: 1894ին, ամերիկեան հիւպատոսին եւ մի-
սիոնարներու միջամտութեամբ ազատ կ'արձակուի եւ կը զրկուի իր ծննդա-
վայրը: 1894ի Սեպտեմբերին Այնթապ երթալով կը յաճախէ Ամերիկեան Կեդ-
րոնական Գոլէճը, որուն շրջանը կ'աւարտէ 1898ին, ստանալով Պատկաւոր
Արուեստից տիտղոսը: 1898 Սեպտ.ին Թոգաթի Հայ Աւետարանական դպրո-
ցին տնօրէնութեան պաշտօնին կը կոչուի, ուր կը մնայ մէկ տարի: 1899ի վեր-
ջերը կը մեկնի Ամասիա եւ հոն իրր ուսուցիչ հայերէնի կը պաշտօնավարէ
մինչեւ 1903 թուականը, Իրրանսեան աղաջային առեւտրական վարժարանին
մէջ: 1903 Սեպտ.ին կը մեկնի Մարզուան, տեղւոյն Աստուածարանական դըպ-
րոցը իր ուսումը շարունակելու համար, որուն շրջանը կ'աւարտէ 1905ին եւ
անմիջապէս պաշտօնի կը կոչուի, նոյն վարժարանին մէջ, դասախօսելով հա-